ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ ռեկտոր,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում սոցիալական արդարության և հավասարության տեսանկյունից վերլուծվել են Բոլոնիայի գործընթացի նպատակներից մեկի՝ բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության էությունը և նշանակությունը:

Մասնավորապես, մանրամասնորեն ուսումնասիրվել են սոցիալական ուղղվածության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում: Հետազոտվել են բարձրագույն կրթության մատչելիության և աղքատության փոխկապվածության հիմնախնդիրները՝ որակական և քանակական տեսանկյունից, վեր են հանվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի համար բարձրագույն կրթություն ստանալու իրական հնարավորությունները:

Կատարվել է բարձրագույն կրթության ֆինանսավորման ոլորտում ՀՀ պետական քաղաքականության համեմատական վերլուծություն աշխարհի տարբեր տարածաշրջանների և երկրների քաղաքականության հետ՝ հիմնվելով բուհերում ընդգրկվածության, վճարովի ու անվճար հիմունքներով ուսուցման, բուհերի ֆինանսավորման միջազգայնորեն կիրառվող այլ ցուցանիշների վրա: Հետազոտվել են նաև ֆինանսական և այլ կարևոր գործոններ, որոնք բացասաբար են անդրադառնում բարձրագույն կրթության մատչելիության վրա՝ ստեղծելով անհավասար պայմաններ բնակչության հատկապես խոցելի խմբերի համար և հանգեցնելով նրանց խիստ սահմանափակ ընդգրկվածությանը բարձրագույն կրթության մեջ: Հետազոտված գործոններն են. (ա) պետական բյուջեից բարձրագույն կրթությանը հատկացվող միջոցների չափազանց փոքր չափը, (բ) ուսման վարձավճարները, որոնք միջինում ավելի բարձր են, քան աղքատության գծից ցածր ապրող ընտանիքների եկամուտները, (գ) պետական նպաստների, կրթաթոշակների և ուսանողներին աջակցության այլ աղբյուրների ու ձևերի սահմանափակ հնարավորությունները և այլն: Կատարվել է վերջին հինգ տարվա տվյալների համեմատական վերլուծություն:

Հոդվածի վերջին մասում հետազոտվել են բնակչության խոցելի խմբերից ուսանողներին հատկացվող աջակցությանն առնչվող հիմնահարցերը:

Հիմնաբառեր. *բարձրագույն կրթություն, սոցիալական ուղղվածություն, ընդգրկվածություն, աղքատություն, ուսման վարձավճար, ֆինանսավորում*

JEL: I23, I24

Ներածություն: Բոլոնիայի գործընթացում կարևորագույններից մեկը բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությունն է, որի նպատակն է ընդլայնել բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկվածությունը: Այն հատկապես թիրախավորում է բնակչության խոցելի խմբերը՝ նպատակ ունենալով բարձրացնել նրանց ներգրավվածությունը բարձրագույն կրթության մեջ և ապահովել ուսումնառության հաջող ավարտը[1]:

Արդի գլոբալացման ժամանակաշրջանում, երբ բարձրագույն կրթությունը զանգվածային է դառնում է ողջ աշխարհում, այն, այնուամենայնիվ, շարունակում է կրել «էլիտարիզմի» դրոշմը՝ հասարակության բարեկեցիկ խավերից ուսանողների զգալիորեն ավելի մեծ մասնաբաժնով[2]: Այս հիմնախնդիրն առավել ակնառու է Հայաստանում: Մինչդեռ, երկրի մարդկային ներուժի զարգացման, երիտասարդների ողջ ներուժի լիարժեք օգտագործման, քաղաքացիների անձնական բարեկեցության ապահովման տեսանկյունից անհերքելի է բարձրագույն կրթության ոլորտում սոցիալական արդարության և հավասար մատչելիության հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը: Երկրի կայուն զարգացման, տնտեսական աճի և տնտեսական արդյունավետության տեսանկյունից բարձրագույն կրթության մեջ սոցիալական արդարության և հավասարության ապահովումը նույնքան անառարկելի փաստարկ է: Ցածր եկամուտ ունեցող ընտանիքից խելացի կամ տաղանդավոր երեխայի բարձրագույն կրթություն չստանալը մարդկային ներուժի կորուստ է ցանկացած երկրի, այդ թվում՝ Հայաստանի համար[3]:

Ուստի, Հայաստանում բարձրագույն կրթության ֆինանսավորմանը և սոցիալական ուղղվածությանը վերաբերող հիմնահարցերը, որոնք ուսումնասիրված են սույն հոդվածում, խիստ արդիական ու կարևոր են համակարգի բարելավման և հրատապ՝ երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից, իսկ կատարված եզրահանգումները նպատակաուղղված են դրանց լուծմանը:

Գրականության ակնարկ: «Սոցիալական ուղղվածություն» հասկացությունն առաջին անգամ Բոլոնիայի գործընթացի պաշտոնական փաստաթղթերում (Պրահայի կոմյունիկեում)[4] ներառվել և օրակարգային հարց է

---

[1] Տե՛ս BFUG Working Group on the Social Dimension and Lifelong Learning 2012-2015, Report, http://www.ehea.info/pid34436/social-dimension.html:

[2] Տե՛ս **Marginson S.,** The Worldwide Trend to High Participation Higher Education: Dynamics of Social Stratification in Inclusive Systems. Higher Education, 72, 2016, էջ 413–434:

[3] Տե՛ս **Salmi J.,** Social Dimension Within a Quality Oriented Higher Education System. // Curaj A., Deca L., Pricopie R. (eds) European Higher Education Area: The Impact of Past and Future Policies. Springer, Cham, 2018, էջ 141-154:

[4] Տե՛ս Towards the European Higher Education Area. Communiqué of the Meeting of European Ministers in Charge of Higher Education in Prague on May 19th 2001, էջ 3, available

դարձել 2001 թ.: Արդարության համար պետք է նշել, որ հարցը եվրոպական ասպարեզ է բերվել և բարձրագույն կրթության բարեփոխումների բոլոնյան նպատակների մեջ է ընդգրկվել ուսանողների կողմից՝ նրանց լոբբիստական գործողությունների արդյունքում[5]: Մասնավորապես, Պրահայի նախարարական գագաթնաժողովից անմիջապես առաջ Ուսանողների եվրոպական միությունը[6] Գյոտեբորգում ընդունեց հռչակագիր, որն այնուհետև ներկայացրեց գագաթնաժողովի մասնակիցներին՝ սոցիալական ուղղվածությունը Բոլոնիայի գործընթացի նպատակների մեջ ներառելու արդարացի պահանջով, ինչն էլ ի կատար ածվեց[7]: Ուսանողների Գյոտեբորգյան հռչակագրում նշված էր.

«Թեև Բոլոնիայի հռչակագիրը մատնանշեց եվրոպական տարածքում բարձրագույն կրթության զարգացման հիմնական ուղղությունները, այնուհանդերձ, անհաջողության մատնվեց՝ ուսանողների վրա Բոլոնիայի գործընթացի սոցիալական հետևանքների ազդեցությունը վերհանելու հարցում:

Ուսանողները պարզապես «վաճառվող» կրթական ծառայությունների սպառողներ չեն, հետևաբար, կառավարությունների պատասխանատվությունն է՝ ապահովել բոլոր քաղաքացիների, անկախ նրանց սոցիալական վիճակից, բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորությունները»[8]:

Հավանաբար ճիշտ է այն պնդումը, որ առանց ուսանողների ջանքերի սոցիալական ուղղվածությունն առանցքային տեղ չէր գրավի ինչպես համաեվրոպական, այնպես էլ առանձին երկրների բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություններում: Սակայն սոցիալական ուղղվածությունը Բոլոնիայի գործընթացի նպատակներում ներառելուն աջակցել են նաև Եվրոպական խորհուրդը և «Միջազգային կրթություն» կազմակերպությունը[9]:

Մինչև 2005 թ. Բերգենի նախարարական գագաթնաժողովը սոցիալական ուղղվածությունը հիշատակվում էր միայն Բոլոնիայի գործընթացի տարբեր ուղղությունների համատեքստում: Ըստ էության, այն դիտվում էր որպես համընդգրկուն բաղադրիչ, որը սոցիալական խնդիրները վերհանում էր Բոլոնիայի գործընթացի տարբեր ուղղություններում՝ շարժունություն, բարձրագույն կրթության եռամակարդակ կառուցվածք, կրեդիտային համակարգ և այլն: Սկսած 2005 թվականից՝ սոցիալական ուղղվածությունը ստացավ

---

at:http://www.ehea.info/media.ehea.info/file/2001_Prague/44/2/2001_Prague_Communique_English_553442.pdf:

[5] Տե՛ս **Zgaga P.,** The Social Dimension in the European Higher Education Area. In Baranović, B. (ed.), 2015. Koji srednješkolci namjeravaju studirati? Pristup visokom obrazovanju i odabir studija [Which High School Students Plan to Study? Access to Higher Education and the Selection of Studies]. (Biblioteka Znanost i društvo, 37). 2015, էջ 211-233 (էջ 217):

[6] Ուսանողների եվրոպական միություն (ESU, նախկինում՝ ESIB):

[7] Տե՛ս **Klemenčič M.,** How ESIB- the National Union of Students Got into the Bologna Process. In Ivosević V., Päll A. and M. Vukasović. ESU turns 30! Fighting for Student Rights Since 1982. Brussels: European Students' Union, 2012, էջ 17-28 (էջ 26-27),
http://scholar.harvard.edu/files/manja_klemencic/files/2012_klemencic_how_esib_got_into_bologna_process.pdf?m=1444558454:

[8] ESIB. Student Göteborg Declaration The Student Göteborg Convention, 22nd to the 25th of March 2001, p.1, 25 March 2001, http://www.aic.lv/ace/ace_disk/Bologna/maindoc /STUD_GOETEB.pdf:

[9] Տե՛ս **Zgaga P.,** նշված աշխ., էջ 211-233 (էջ 217):

առանձնահատուկ կարևորություն և ամրագրվեց որպես Բոլոնիայի գործընթացի առանձին ռազմավարական ուղղություն[10]:

Մինչ օրս սոցիալական ուղղվածության հստակ սահմանում տրված չէ, սակայն 2007 թ. Լոնդոնի նախարարական գագաթնաժողովի կոմյունիկեում այն նկարագրվել է հետևյալ կերպ.

«Բարձրագույն կրթությունը պետք է առանցքային դերակատարում ունենա հասարակության սոցիալական համախմբման, անհավասարությունների նվազեցման և գիտելիքի, հմտությունների ու կարողությունների մակարդակի բարձրացման գործում: Հետևաբար, քաղաքականության նպատակն է առավելագույնի հասցնել անհատի ներուժը՝ թե՛ իր անձնական զարգացման, թե՛ կայուն, ժողովրդավարական, գիտելիքահենք հասարակություն ստեղծելու գործում իր ներդրումը կատարելու համար:

...Բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում ուսանողության կազմը պետք է արտացոլի բնակչության ողջ բազմազանությունը՝ թե՛ բուհ ընդունվելիս, թե՛ ուսումնառելիս, թե՛ ավարտելիս:

...Ուսանողները պետք է կարողանան ավարտին հասցնել իրենց ուսումը՝ առանց սոցիալական և տնտեսական խնդիրների հետ կապված խոչընդոտների»[11]*:*

Հետագա քննարկումները և հետազոտությունները հանգեցրին սոցիալական ուղղվածության դիտարկմանը՝ մի շարք տեսանկյուններից:

Բարձրագույն կրթությունը՝

- անձի հիմնարար իրավունք է, հանրային բարիք և պետական պատասխանատվություն,
- պետք է ապահովի որակյալ աշխատուժի պատրաստում՝ որպես մրցունակ և գիտելիքահենք տնտեսության հիմնական գրավական,
- պետք է ելնի սոցիալական արդարության սկզբունքից՝ ապահովելով բոլոր, հատկապես՝ խոցելի խմբերի ուսանողների բարձրագույն կրթություն ստանալու, ուսումնառությունը հաջող ավարտելու և շարժունության ծրագրերին մասնակցելու հավասար հնարավորություններ,
- պետք է աջակցի ուսանողների՝ աշխատաշուկա սահուն անցմանը[12]:

Այսպիսով, սոցիալական ուղղվածությունը մի կողմից առերեսվում է երկրների տնտեսական մրցունակության խնդրի հետ՝ պայմանավորված ներկայիս գլոբալ զարգացումներով, մյուս կողմից՝ վեր է հանում այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են բարձրագույն կրթության հավասար հնարավորությունների ապահովումը՝ խափանելով դրանց վերացումը[13]:

---

[10] Տե՛ս **Kooij Y.,** European Higher Education Policy and the Social Dimension: A Comparative Study of the Bologna Process. Palgrave Macmillan, 2015, էջ 58:

[11] Towards the European Higher Education Area: Responding to Challenges in a Globalised World. London Communiqué, 18 May, 2007, էջ 5, http://www.ehea.info/Upload/document /ministerial_declarations/2007_London_Communique_ English_588697.pdf:

[12] Տե՛ս Equality in a Knowledge-based Society - How to Widen Opportunities? (Best Practices in National Action Plans), General Report of the Official Bologna Process Seminar, 10-11 November 2008, Budapest, Hungary, preprared by Katalin Tausz and Katalin Gyöngyösi, էջ 12, http://www.aic.lv/ace/ace_disk/2007_09/sem07_09/Budap_socdim/General_report.pdf:

[13] Տե՛ս **Zgaga P.,** The Social Dimension in the European Higher Education Area. In Baranović, B. (ed.) Koji srednješkolci namjeravaju studirati? Pristup visokom obrazovanju i odabir studija [Which

Տարբեր հետազոտություններում բարձրացվում է այն հարցը, որ հնարավոր չէ երաշխավորել բարձրագույն կրթության սոցիալական արդարությունը և միաժամանակ խթանել վերջինիս մրցունակությունը, քանի որ այդ երկու մոտեցումները համատեղելի չեն: Մրցակցությունն աստիճանաբար հանգեցնում է բարձրագույն կրթության՝ շուկայական ծառայություն, այլ ոչ թե հանրային բարիք դառնալուն՝ խաթարելով սոցիալական արդարության սկզբունքը[14]: Միևնույն ժամանակ, պետության կողմից բարձրագույն կրթության հավասար ու ներառական հնարավորությունների ապահովումը անհրաժեշտ է սոցիալական արդարության հասնելու և բոլոր երիտասարդների ներուժը լիարժեք ու լավագույնս իրացնելու համար[15]:

Մինչև 2010 թվականը սոցիալական ուղղվածության հետազոտությունները սակավաթիվ էին և մեծավ մասամբ իրականացվում էին Բոլոնիայի գործընթացի կառուցվածքային մարմինների կողմից՝ Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ[16]: Կարևոր է հիշատակել 2009 թ. իրականացված «Եվրոստուդենտ» հետազոտությունը, որի նպատակն էր *«տրամադրել հուսալի և համադրելի տվյալներ՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) սոցիալական ուղղվածության հիմնական բաղադրիչների վերաբերյալ»*:[17] Այն առաջին համակարգված հետազոտությունն էր, որում կատարված էր բարձրագույն կրթության սոցիալական խնդիրների համեմատական վերլուծություն ԵԲԿՏ և այլ երկրների[18] միջև՝ հիմնված ընդգրկվածությունը, ուսումնառության պայմանները, շարժունությունը և զբաղվածունակությունը նկարագրող 18 ցուցանիշի վրա:

2010 թվականից հետո սոցիալական ուղղվածության հետազոտությունների թիվը զգալիորեն ավելացավ: Դրանց շարքում կարևոր է նշել «Եվրոստուդենտ» վեց հետազոտությունների հետագա շարքը՝ նպատակաուղղված ԵԲԿՏ երկրների ուսանողների սոցիալ-տնտեսական խնդիրների վերլուծմանը: Հետազոտություններից վերջինն իրականացվել է 2006-2008 թթ.[19]:

Մի շարք այլ խորքային հետազոտություններ իրականացվեցին Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ, որոնց հիմնական եզրահանգումներն են.

1. ԵԲԿՏ շատ քիչ թվով երկրներ են սահմանել բնակչության խոցելի խմբերի ընդգրկվածությունը բարձրագույն կրթության մեջ բարձրաց-

---

High School Students Plan to Study? Access to Higher Education and the Selection of Studies]. (Biblioteka Znanost i društvo, 37). Zagreb, 2015, էջ 211-233 (էջ 217):

[14] Տե՛ս **Hackl E.,** The Intrusion and Expansion of Community Policies in Higher Education. Higher Education Management, 2001, 13 (3), էջ 99–117 (էջ 115):

[15] **Salmi J.,** Social Dimension Within a Quality Oriented Higher Education System. In: Curaj A., Deca L., Pricopie R. (eds) European Higher Education Area: The Impact of Past and Future Policies. Springer, Cham, 2018, էջ 141-154:

[16] **Zgaga P.,** նշված աշխ., էջ 211-233 (էջ 220):

[17] Տե՛ս Eurostat, Eurostudent. The Bologna Process in Higher Education in Europe: Key indicators on the social dimension and mobility. Eurostat – eurostudent.eu. էջ 3, 2009, https://www.eurostudent.eu/download_files/documents/KS-78-09-653-EN.pdf:

[18] ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, ճապոնիա, Նոր Զելանդիա:

[19] Տե՛ս **Gwosć C., Vögtle E.M., Hauschildt K.,** Social and Economic Conditions of Student Life in Europe: Eurostudent VI, 2016–2018 | Synopsis of Indicators. German Centre for Higher Education, 2008, available at: https://www.eurostudent.eu/download_files/documents/EUROSTUDENT_VI_Synopsis_of_Indicators.pdf

նելու հստակ թիրախներ: Այդ ուղղությամբ ամենատարածված միջոցը հասցեական ֆինանսական աջակցության տրամադրումն է և բուհի ընդունելության այլընտրանքային կառուցակարգերի կիրառումը, մասնավորապես՝ նպատակային տեղերի սահմանումը և ուսանողական աջակցության տարատեսակ ծառայությունների տրամադրումը: ԵԲԿՏ երկրների մի մասն էլ, մեծացնելով բուհերում ընդհանուր ընդգրկվածությունը, դրանով իսկ որոշակիորեն մեծացնում է նաև խոցելի խմբերինը[20]:

2. Ուսման վարձերը և ուսանողական աջակցության կառուցակարգերը սոցիալական ուղղվածության առանցքային հարցերն են: Սոցիալապես անապահով խավի համար ուսման վարձավճարները բարձրագույն կրթություն ստանալու հիմնական խոչընդոտն են, բայց ուսանողներին աջակցության գործուն կառուցակարգերը կարող են դառնալ արդյունավետ հակակշիռ: Ուստի, կարևոր է ուսման վարձավճարների և աջակցության կառուցակարգերի միջև հավասարակշռության ապահովումը:
3. ԵԲԿՏ երկրները միմյանցից էապես տարբերվում են սոցիալական քաղաքականությամբ՝ վարձավճարների լրիվ բացակայությունից մինչև բոլոր ուսանողների կողմից դրանց վճարում կամ ուսանողներին աջակցության ծառայությունների գրեթե ամբողջական բացակայությունից մինչև դրանց տրամադրում բոլոր ուսանողներին: Ուսման վարձերի չափերը և ուսանողական աջակցության ձևերը ևս երկրներում խիստ տարբերվում են: Մի մասում կրթաթոշակներից բացի, պետության կողմից տրամադրվում են նաև ուսանողական վարկեր, դրամաշնորհներ կամ հարկային արտոնություններ[21], իսկ մյուսներում՝ ոչ:
4. ԵԲԿՏ երկրների բարձրագույն կրթության համակարգերում անհավասարությունները զգալիորեն տարբերվում են իրենց բնույթով, մասշտաբով և հետևանքներով[22]:
5. ԵԲԿՏ երկրներում սոցիալական ուղղվածության խնդիրները բազմաթիվ են, և առաջընթացի ուղղությամբ *«անելիքները դեռևս շատ են»*:[23]

Մեթոդաբանություն: Հետազոտության մեջ վերհանվել են Հայաստանում բարձրագույն կրթության սոցիալական հիմնախնդիրների պատճառահետևանքային կապերը, դրանց տարածվածությունը, խորքային առանձնա-

---

[20] Տե՛ս European Commission /EACEA/ Eurydice. Focus on Higher Education in Europe 2010: The Impact of the Bologna Process. Brussels: Eurydice, 2010, էջ 27, http://www.aic.lv/bolona/2010 /minsterial/FOCUS_HE_2010_EN.pdf:
European Commission /EACEA/ Eurydice. Modernisation of Higher Education in Europe 2011: Funding and the Social Dimension. Brussels: Eurydice. 2011, էջ 60, http://www.finhed.org /media/files/12-131EN.pdf:

[21] Տե՛ս նույն տեղը, էջ 61:

[22] Տե՛ս **Ballas D., Lupton R., Kavroudakis D., Hennig B., Yiagopoulou V., Dale R., Dorling D.,** Mind the gap: Education inequality across EU regions. An independent report authored for the European Commission by the NESSE network of experts; www.nesse.fr., 2012, էջ 13-14:

[23] Տե՛ս European Commission /EACEA/. Eurydice. Modernisation of Higher Education in Europe: Access, Retention and Employability 2014. Eurydice Report. Luxembourg: Publications Office of the European Union, 2014, էջ 9, https://eurydice.org.pl/wp-content/uploads/2015/01 /165EN.pdf:

հատկությունները և օրինաչափությունները՝ ֆինանսատնտեսական վերլուծության և կրթական հետազոտությունների մեթոդաբանական բաղադրիչների համադրմամբ:

Կատարվել է մի շարք փաստաթղթերի, հետազոտությունների, վերլուծական և վիճակագրական զեկույցների բովանդակային և տվյալների քանակական վերլուծություն: Մասնավորապես, ուսումնասիրվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ), Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և այլ վիճակագրական տվյալների բազաները, վերլուծվել են բազմաթիվ տվյալներ և կատարվել են մաթեմատիկական հաշվարկներ:

Հետազոտվել են տնտեսական և կրթական մի շարք ցուցանիշներ, կատարվել է դրանց հորիզոնական (ժամանակային) և համեմատական վերլուծություն՝ վերհանելով ցուցանիշների փոփոխության շարժընթացը տարիների կտրվածքով և համեմատելով դրանք այլ երկրների և տարածաշրջանների համանման ցուցանիշների հետ:

Դիտարկվել է տարբեր գործոնների ազդեցությունը ուսումնասիրվող ցուցանիշների վրա:

Վիճակագրական տվյալների վերլուծության և կատարված հաշվարկները ակնառու ներկայացնելու նպատակով օգտագործվել են գրաֆիկական մեթոդներ, արդյունքները՝ գծապատկերների և աղյուսակների տեսքով:

Վերլուծություն

Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապվածությունը Հայաստանում

Հոդվածի այս բաժնում ուսումնասիրված են սոցիալական ուղղվածության հիմնախնդիրները Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում, որոնց թվում, իհարկե, առաջնայինն ուսման վարձավճարներն են և բարձրագույն կրթության հետ կապված այլ ծախսերը, որոնք հասարակության տարբեր խավերի միջև ստեղծում են բարձրագույն կրթություն ստանալու անհավասար պայմաններ: Մասնավորապես, ուսման վարձավճարները սոցիալապես անապահով խավերի համար առաջացնում են բուհ ընդունվելու և ուսումնառության ընթացքում առաջադիմելու լուրջ խոչընդոտներ:

Ընդ որում, անգամ տնտեսապես զարգացած երկրներում սա կարևոր խնդիր է, որը գտնվում է հետազոտողների և հասարակության ուշադրության կենտրոնում:

Օրինակ, Վիսկոնսին-Մեդիսոն համալսարանի կողմից կատարված ուսումնասիրության համաձայն՝ ԱՄՆ-ում *«շատերի համար, ովքեր ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն, դրա աճող արժեքը և անբավարար ֆինանսական օգնությունը ստեղծում են էական խոչընդոտներ, հատկապես՝ աղքատների համար:*

Ցածր եկամուտ ունեցող ուսանողների համար բուհից դուրս մնալը կամ այն ավարտելն էապես կախված է ֆինանսական աջակցություն ստանալու

հնարավորություններից»[24]*:*

Վերոնշյալ հիմնախնդրի վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ բարձրագույն կրթության և աղքատության փոխկապվածության հարցին: Հայտնի փաստ է, որ բարձրագույն կրթությամբ մարդիկ ունեն լավ վարձատրվող աշխատանք գտնելու և բարեկեցիկ ապրելու ավելի լայն հնարավորություններ, քան նրանք, ում կրթական մակարդակը ցածր է: Ուստի, բարձրագույն կրթությամբ մարդկանց համար աղքատությունը շատ ավելի փոքր վտանգ է, քան բարձրագույն կրթություն չունեցողների:

Ընդ որում, ասվածն օրինաչափ իրողություն է ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Այսպես, Համաշխարհային բանկի կողմից աշխարհի 91 երկրում իրականացված վերջին հետազոտության արդյունքների համաձայն՝ *«Ավելի ուժեղ հարաբերակցություն է նկատվում աղքատության և կրթական մակարդակի միջև: Կրթություն չունեցող մեծահասակների շրջանում ավելի քան մեկ հինգերորդը աղքատ է: Նույնիսկ որոշ կրթություն ունենալն արդեն առավելություն է. աղքատության մակարդակը գրեթե կիսով չափ նվազում է անգամ թերի տարրական կրթություն ունեցող մեծահասակների շրջանում: Մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում աղքատությունը գրեթե ամբողջությամբ բացակայում է»*[25]*:*

Հայաստանում բարձրագույն կրթության և աղքատության փոխկապվածության հարցի ուսումնասիրման համար անդրադառնանք 2017 թ. «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ՏՏԿԱ) հետազոտության» զեկույցին, որում մասնավորապես նշված է.

«Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակն ամենացածրն է՝ այն շուրջ 1.8 անգամ ցածր է 16-ից բարձր տարիքի բնակչության միջին հանրապետական աղքատության մակարդակից»[26]*:*

Ավելին, բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում ծայրահեղ աղքատների թվաքանակը ամենից ցածրն է՝ ընդամենը 0.5%:

Զեկույցում նաև նշված է, որ բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակը 2017 թ. եղել է համապատասխանաբար 2.4 և 2.5 անգամ ավելի ցածր, քան տարրական կամ դրանից ցածր և թերի միջնակարգ կրթություն ունեցող անձանց շրջանում:

Զեկույցում բերված մեկ այլ ցուցանիշի համաձայն՝ աղքատ բնակչության շրջանում բարձրագույն կրթությամբ անձինք կազմում են 13.3%, իսկ նրանք, ովքեր չունեն բարձրագույն կրթություն՝ 86.7%, ընդ որում՝ ամենամեծ խումբը միջնակարգ կրթությամբ անձինք են՝ կազմելով աղքատ բնակչության 53%-ը:

---

[24] **Roble J.,** Poverty Fact Sheet: Financial Barriers to College Completion. Institute for Research on Poverty, University of Wisconsin–Madison, 2017, https://www.irp.wisc.edu/publications /factsheets/pdfs/FactSheet12-CollegeBarriers.pdf.

[25] Poverty and Shared Prosperity 2018: Piecing Together the Poverty Puzzle. International Bank for Reconstruction and Development/The World Bank, 2018, p. 38, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/30418/9781464813306.pdf.

[26] «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018», վիճակագրական – վերլուծական զեկույց, ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, էջ 56, https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf:

Հետևությունն ակնհայտ է. Հայաստանում աղքատության մակարդակն իջեցնելու նպատակով կառավարությունը պետք է ուղղորդված քայլեր ձեռնարկի, որպեսզի բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ ապահովի հասարակության բոլոր խավերի համար և, հետևաբար, վերացնի աղքատ բնակչության առջև ծառացած բարձրագույն կրթություն ստանալու խոչընդոտները:

Ավաղ, երկրում իրավիճակն այս առումով գոհացուցիչ չէ, քանի որ բնակչության տարբեր սոցիալական խմբերի համար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները խիստ տարբեր են: Դրա վկայությունն են 2017 թ. *տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված* (ՏՏԿԱ) հետազոտության մեջ բերված հետևյալ տվյալները.

«Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների 84.2%-ը ոչ աղքատ տնային տնտեսություններից է, 15.7%-ը՝ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և 0.1%-ը՝ ծայրահեղ աղքատ»[27] *(գծապատկեր 1):*



Գծապատկեր 1. ***ՀՀ բուհերում սովորողների համամասնությունը՝ ըստ բնակչության սոցիալական խմբերի***

Ավելին, նույն հետազոտության մեջ բերված են նաև տվյալներ բուհերում ուսանողների համախառն ընդգրկվածության մասին՝ ըստ բնակչության բարեկեցության քվինտիլների: Այսպես, ամենաաղքատ առաջին քվինտիլիում ուսանողների համախառն ընդգրկվածությունը բուհերում 2017 թ. կազմել է 26%, երկրորդ քվինտիլում՝ 29%, երրորդում՝ 15%, չորրորդում՝ 50% և ամենահարուստ հինգերորդ քվինտիլում՝ 89%: Գծապատկեր 2-ում ներկայացված են

[27] «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018», վիճակագրական – վերլուծական զեկույց, ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, էջ 182-183, https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf:

բարձրագույն կրթության ոլորտում համախառն ընդգրկվածության ցուցանիշները՝ ըստ քվինտիլների:



Գծապատկեր 2. ***Բարձրագույն կրթության մեջ համախառն ընդգրկվածությունը՝ ըստ քվինտիլների, 2017 թ.***

Բերված տվյալները ակնհայտ ապացույցն են այն բանի, որ մեր երկրում որքան բարձր է անձի կամ ընտանիքի (տնային տնտեսության) աղքատության մակարդակը, այնքան ցածր է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը: Ոչ աղքատ ընտանիքներից սովորողների թիվը բուհերում շուրջ 5.4 անգամ մեծ է աղքատ ընտանիքներից սովորողների թվից, իսկ ծայրահեղ աղքատ ընտանիքներից երիտասարդները, ըստ էության, բարձրագույն կրթություն չեն ստանում այն պարագայում, երբ ամենահարուստ ընտանիքներից երիտասարդների գրեթե 90%-ը ստանում է բարձրագույն կրթություն:

Անհրաժեշտ է պարզել նաև, թե բնակչության որ մասի համար է բարձրագույն կրթությունն իրապես ոչ մատչելի:

Այդ նպատակով կրկին անդրադառնանք ՏՏԿԱ հետազոտության արդյունքներին, որոնց համաձայն՝

- *«2017 թ. Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 25.7%: Սա նշանակում է, որ երկրի բնակչության ամեն չորրորդը ամսական 41612 ՀՀ դրամով ցածր է գտնվել աղքատության վերին գծից»:*
- *«25.7% աղքատների ընդհանուր թվաքանակի մեջ 1.4%-ը ծայրահեղ աղքատ է, 9.2%-ը՝ չափավոր (շատ) աղքատ, իսկ մնացած 15.1%-ը՝ ուղղակի աղքատ»:*
- *«2017 թ. աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 766000 մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), նրանցից չափավոր աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղ-*

քաղաքները)՝ շուրջ 316 000, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ շուրջ 42 000 մարդ»[28]:

Հաշվի առնելով, որ միջինում բնակչության շուրջ 15%-ը 18-25 տարեկաններն են[29] (ուսանողների հիմնական տարիքային խումբը), ուստի մոտավոր հաշվարկով 766 000 աղքատ բնակչությունից շուրջ 115 000-ը երիտասարդների այն հավանական խումբն է, որը կարող է ընդգրկվել բուհերում: Ավաղ, ինչպես նշվեց վերը, 2017 թ. ՀՀ բուհերում սովորող ուսանողներից միայն 15.7%-ն է աղքատ ընտանիքներից, ինչը կազմում է բուհերում սովորող 91 670 ուսանողից ընդամենը շուրջ 14 390-ը՝ ***շուրջ 8 անգամ ավելի քիչ, քան աղքատ ընտանիքներից հավանական ուսանողների թիվը:***

Նույն մոտեցմամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ծայրահեղ աղքատ 42 000 բնակչությունից հաշվարկային թվով շուրջ 6 300-ը 18-25 տարեկանների այն խումբն է, որը կարող էր ընդգրկվել բուհերում: Մինչդեռ, ծայրահեղ աղքատ ընտանիքներից բուհերում սովորողները 2017 թ. կազմել են սովորողների ընդհանուր թվի 0.1%-ը կամ շուրջ 90 սովորող՝ ***շուրջ 70 անգամ ավելի քիչ, քան այդ սոցիալական խմբից հավանական ուսանողների թիվը:***

Միևնույն ժամանակ, ոչ աղքատ ընտանիքներից 18-ից 25 տարեկանների հաշվարկային թիվը կազմում է շուրջ 315 900[30], իսկ այդ ընտանիքներից ՀՀ բուհերում սովորողների թիվը 2017 թ. կազմել է ուսանողների ընդհանուր թվի շուրջ 84.2%-ը կամ շուրջ 77 200՝ ***4 անգամ ավելի քիչ, քան ոչ աղքատ ընտանիքներից հավանական ուսանողների թիվը:***

Վերը բերված վերլուծությունը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ բնակչության ոչ աղքատ, աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքներից երիտասարդների՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները և արդյունքում՝ բուհերում ընդգրկումը խիստ անհավասար է:

Բուհ ընդունվելու և բուհում սովորելու անհավասար հնարավորությունները ծայրահեղ աղքատների, աղքատների և հարուստների միջև պայմանավորված են փոխկապված մի շարք պատճառներով, որոնցից կարելի առանձնացնել հետևյալ մի քանիսը.

- Ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններում) կրթության և նախամասնագիտական պատրաստության որակը բավարար չէ բուհ ընդունվելու համար, հատկապես՝ գյուղական համայնքների դպրոցներում: Արդյունքում, դպրոցում ստացած գիտելիքի և բուհ ընդունվելու համար անհրաժեշտ գիտելիքի միջև առաջանում է որոշակի խզում, ինչը ստեղծում է կրկնուսույցների լրացուցիչ ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն:
- Բուհի ընդունելության մրցույթն իրականացվում է առաջադիմության սկզբունքով՝ քննություններից ստացած միավորներով: Ուստի, ան-

[28] «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018», վիճակագրական–վերլուծական զեկույց, ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, էջ 39-41, https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf:

[29] Վերցված են ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, ՀՀ 2011 թ. մարդահամար, https://www.armstat.am/am/?nid=532:

[30] Նույն տեղը:

վճար տեղեր զբաղեցնում են ընդունելության քննություններից առավել բարձր միավորներ հավաքած դիմորդները: Անվճար տեղեր չեն հատկացվում աղքատության և այլ սոցիալական չափանիշներով, ինչը կրկին ստեղծում է կրկնուսույցների լրացուցիչ ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն:

- Վճարովի հիմունքներով սովորելու համար գումար է անհրաժեշտ ոչ միայն ընդունելության քննություններին պատրաստվելու, լրացուցիչ պարապելու, այլև ուսման վարձի վճարման և ուսման հետ կապված հավելյալ ծախսերը (ուսումնական գրականության, գրենական պիտույքների, տրանսպորտի, սննդի և նմանատիպ այլ ծախսեր) հոգալու համար: Անհրաժեշտ գումարի չափը հիմնականում ավելի բարձր է, քան աղքատ բնակչության ամսական եկամուտները, որոնք, ինչպես նշվեց վերը, որպես կանոն, ցածր են ամսական 41 612 ՀՀ դրամից՝ աղքատության վերին գծից[31]:
- Պետության կողմից չեն կիրառվում աղքատ ընտանիքներից ուսանողների ֆինանսավորման թիրախավորված կառուցակարգեր, իսկ ֆինանսավորման ոչ պետական՝ այլընտրանքային աղբյուրները երկրում, ըստ էության, բացակայում են կամ շատ սակավ են:
- Աղքատ ընտանիքների երեխաները հաճախ չեն էլ մտածում բարձրագույն կրթություն ստանալու մասին, քանի որ ստիպված են դպրոցն ավարտելուց անմիջապես հետո աշխատանք փնտրել՝ ընտանիքի ֆինանսական խնդիրները հոգալու համար: Իսկ եթե ընդունվում են բուհ, ապա որպես օրինաչափություն սկսում են ուսմանը զուգահեռ աշխատել, ինչը բացասական է անդրադառնում նրանց առաջադիմության վրա: Նրանք հաճախ նաև դուրս են մնում բուհից՝ ուսման վարձը չվճարելու պատճառով:

Այս հիմնախնդիրները պայմանավորված են այն օրինաչափությամբ, որ բարեկեցիկ ընտանիքների երեխաները ավելի մեծ նախադրյալներ և հնարավորություններ ունեն թե՛ կրկնուսույցների մոտ լրացուցիչ պարապելու, ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնելու և բուհ ընդունվելու, թե՛ բուհում սովորելու:

Համապատասխանաբար նաև հանրային կարծիք է ձևավորվում: Բազմաթիվ են հրապարակումները աղքատ ընտանիքների երեխաների կրթության հնարավորությունների մասին: Այդպիսի մեկ օրինակ բերված է ստորև:

«Ֆինանսական շատ փոքր հնարավորություն ունեցող այս ընտանիքների զավակների՝ բարեկեցիկ ապագա ունենալու հեռանկարը վտանգված է, քանի որ ինչպես շատ ծնողներ են փաստում, դպրոցական տետրերի ու գրքերի գումարը չեն կարողանում վճարել, ու շատ հաճախ երեխաները կիսատ են թողնում անգամ միջնակարգ կրթությունը, էլ ուր մնաց՝ մասնագիտական միջին կամ բարձրագույն կրթություն ստանան: Այսօր աղքատության մեջ ապրող շատ ընտանիքների միակ ցանկությունն է աշխատատեղերի բացումն ու իրենց՝ աշխատելու հնարավորություն ստանալը, ինչի մասին խոսում են, բայց կարծես իրենք էլ չեն հավատում»[32]:

---

[31] Ուսման վճարների հարցին անդրադարձ է կատարված սույն հոդվածի հետագա բաժիններում:

[32] Ամբողջական հոդվածին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://armlur.am/35067/:

Եզրահանգումներ

- Աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքների երիտասարդների բարձրագույն կրթություն ստանալու հիմնական խոչընդոտը անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունն է, ընդ որում՝ այդ միջոցների զգալի մասը կազմում է ուսման վարձավճարի համար անհրաժեշտ գումարը:
- Պետությունը պետք է վարի «աղքատամետ» և սոցիալական անարդարությունները մեղմելու քաղաքականություն՝ ձեռնարկելով այնպիսի քայլեր, որոնք կլուծեն աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքների երիտասարդների համար բարձրագույն կրթության հասանելիությունը սահմանափակող առանցքային հիմնախնդիրները:

Անվճար և վճարովի հիմունքներով սովորողների համամասնությունը

Անհրաժեշտ է նաև հասկանալ, թե բուհերի սովորողների որ մասն է ուսումնառում անվճար հիմունքներով և որ մասը՝ վճարովի, և ընդհանուր առմամբ, ինչպիսին են անվճար հիմունքներով ուսումնառության հնարավորությունները Հայաստանում: Այդ նպատակով ուսումնասիրվել են 2017-2018 ուսումնական տարում սովորողների թվաքանակի վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները[33], որոնք ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ բուհերում սովորողների թվաքանակի վերաբերյալ տվյալները, 2017-2018 ուսումնական տարի

Բուհեր	Սովորողների ընդհանուր թիվը				91 670	
	Սովորողների թիվը ըստ կրթական աստիճանների					
	Բակալավրիատ		*Մագիստրատուրա*		*Հետբուհական կրթություն (ասպիրանտուրա, դոկտորանտուրա)*	
Պետական	*Անվճար*	*Վճարովի*	*Անվճար*	*Վճարովի*	*Անվճար*	*Վճարովի*
	10214 (14.7%)	59162 (85.3%)	3530 (31.6%)	7652 (68.4%)	1040-ասպիրանտ 43 –դոկտորանտ Ընդամենը՝ 1083 (96%)	45-ասպիրանտ 2-դոկտորանտ Ընդամենը՝ 47 (4%)
Ընդամենը պետական	**69376**		**11182**		1085-ասպիրանտ, 45-դոկտորանտ **Ընդամենը՝ 1130**	
Ոչ պետական	-	9371 (100%)	92 (15%)	519 (85%)	-	
Ընդամենը ոչ պետական	**9371**		**611**		-	
Ընդամենը պետական և ոչ պետական	10214 (13%)	68533 (87%)	3622 (31%)	8171 (69%)	-	
Ուսանողների ընդհանուր թիվը	**78 747**		**11 793**		**1130**	

Այսպիսով, համաձայն աղյուսակ 1-ում բերված տվյալների՝ 2017-2018 ուսումնական տարում ՀՀ բուհերում սովորողների ընդհանուր թիվը բարձրագույն կրթության 3 աստիճաններում կազմել է 91 670:

[33] ՀՀ սոցիալական վիճակը 2017 թվականին և դինամիկ շարքեր (2013-2017), վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, էջ 214-313, https://www.armstat.am/file/article/soc_ vich_2017_6.pdf:

Ընդ որում, սովորողների բաշխումը, ըստ բարձրագույն կրթության 3 աստիճանների, կազմել է (գծապատկեր 3)՝

- 1-ին աստիճանում (բակալավրիատում)՝ 78 747 ուսանող (սովորողների ընդհանուր թվի 85.9%-ը),
- 2-րդ աստիճանում (մագիստրատուրայում)՝ 11 793 ուսանող (սովորողների ընդհանուր թվի 12.9 %-ը),
- իսկ 3-րդ աստիճանում (ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում)՝ 1130 սովորող (սովորողների ընդհանուր թվի 1.2%-ը):



Գծապատկեր 3. ***ՀՀ բուհերի սովորողների բաշխումը ըստ բարձրագույն կրթության 3 աստիճանների, 2017-2018 ուսումնական տարի***

Բարձրագույն կրթության բոլոր 3 աստիճաններում սովորողների ընդհանուր թվաքանակի բաշխումը, ըստ անվճար և վճարովի ուսուցման համակարգերի, 2017-2018 ուստարում կազմել է.

- վճարովի ուսուցման համակարգ՝ սովորողների 84%-ը,
- անվճար ուսուցման համակարգ՝ սովորողների 16%-ը:

Պետք է նաև նշել, որ անվճար համակարգում սովորողների ուսման վճարը փոխհատուցվում է պետության կողմից՝ նպաստի ձևով: Այսինքն, պետությունը լրիվ ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ՀՀ բուհերում սովորողների միջինում ընդամենը 16%-ին՝ լրիվ փոխհատուցելով նրանց ուսման վճարը, սակայն բուհից բուհ այս ցուցանիշը տարբերվում է:

Համեմատության համար նշենք, որ ՏՀԶԿ երկրներում պետական ծախսերը միջինում կազմում են բարձրագույն կրթության համակարգի ծախսերի 70%-ը, մասնավոր ոլորտի ներդրումները՝ 20%-ը և տնային տնտեսություններինը՝ միայն 10%-ը[34]:

Համանման պատկեր է նաև Եվրոպական միության (ԵՄ) երկրներում: Իհարկե, ՏՀԶԿ և ԵՄ երկրները միմյանցից զգալիորեն տարբերվում են թե՛ պետության կողմից մեկ ուսանողի վրա կատարվող ծախսերի չափով, թե՛ պետության, մասնավոր ոլորտի և տնային տնտեսությունների միջև բարձրագույն կրթության համակարգի ծախսերի բաշխման համամասնությամբ: Օրինակ, ՏՀԶԿ և ԵՄ մի շարք երկրներում (Դանիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Էստոնիա, Սլովակիա, Սլովենիա, Հունաստան, Կիպրոս, Մալ-

[34] Տե՛ս OECD, How Much Do Tertiary Students Pay and What Public Support Do They Receive?, Education Indicators in Focus, No. 41, OECD Publishing, Paris, 2016, էջ 1-2, https://doi.org/10.1787/5jlz9zk830hf-en:

թա, Թուրքիա) պետական բուհերի բակալավրիատի ուսանողները, որոնք այդ երկրների քաղաքացիներ են, ուսման վարձ չեն վճարում, և պետական ծախսերն այդ երկրներում կազմում են բարձրագույն կրթության համակարգի ծախսերի 80–100%-ը: Միաժամանակ, կան նաև ՏՀԶԿ և ԵՄ մի շարք երկրներ (ԱՄՆ, Չիլի, Կորեա, Ճապոնիա, Միացյալ Թագավորություն և այլն), որտեղ բակալավրիատի ուսանողների մեծամասնությունը վճարում է ուսման վարձեր, ընդ որում՝ դրանք հաճախ բարձր են 2000 ԱՄՆ դոլարից[35]: Սակայն նույնիսկ այդ երկրներում պետական ծախսերը կազմում են բարձրագույն կրթության համակարգի ծախսերի շուրջ 30–60%-ը, իսկ տնային տնտեսությունների կողմից կատարվող ծախսերը՝ ոչ ավելի, քան 25%-ը[36]:

Ուսումնասիրվել է նաև բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանում ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնությունը՝ ըստ անվճար և վճարովի համակարգերի:

Այսպես, 2017-2018 ուստարում բակալավրիատում վճարովի հիմունքներով սովորողները կազմել են սովորողների ընդհանուր թվի 87%-ը, մագիստրատուրայում՝ 69%-ը, իսկ ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում՝ ընդամենը 4%-ը:

Գծապատկերներ 4-ում, 5-ում և 6-ում տրված է անվճար և վճարովի հիմունքներով ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնությունը բակալավրիատում, մագիստրատուրայում, ինչպես նաև ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում:



Գծապատկեր 4. ***Անվճար և վճարովի հիմունքներով ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնությունը բակալավրիատում, 2017-2018 ուսումնական տարի***

[35] ԱՄՆ դոլարը փոխարկված է՝ արտահայտված գնողունակության համարժեքով (PPP):

[36] Տե՛ս European Commission /EACEA/ Eurydice. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, 2018, էջ 7, https://eacea.ec.europa.eu/national-policies /eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_ report_en.pdf:



Գծապատկեր 5. ***Անվճար և վճարովի հիմունքներով ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնությունը մագիստրատուրայում, 2017-2018 ուսումնական տարի***



Գծապատկեր 6. ***Անվճար և վճարովի հիմունքներով ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնությունը ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում, 2017-2018 ուսումնական տարի***

Եզրահանգումներ

- Վերը բերված տվյալներից երևում է, որ ՀՀ-ում որքան բարձր է կրթական աստիճանը, այնքան փոքր է վճարովի հիմունքներով սովորողների թիվը:
- Վճարովի հիմունքներով սովորողների թվի նվազումը, կրթության մակարդակի բարձրացմանը զուգընթաց, բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ բնակչության աղքատության մակարդակը բարձր է, իսկ վճարունակությունը՝ ցածր, և դրանով պայմանավորված՝ ուսանողները բակալավրիատն ավարտելուց հետո անմիջապես փորձում են անցնել աշխատանքի և ունենալ որոշակի եկամուտ:
- Սակայն պետք է նշել, որ կան նաև մի շարք այլ հանգամանքներ, որոնք ոչ ուղղակիորեն նպաստում են բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակներում ուսանողների թվաքանակի և մասնավորապես վճարովի հիմունքներով սովորողների թվաքանակի նվազմանը: Դրանցից կարևոր են՝

– Հայաստանի աշխատաշուկայում բակալավրի որակավորումը հիմնականում բավարար է աշխատանք գտնելու համար,
– բակալավրիատն ավարտելուց հետո հետագա բարձրագույն կրթություն ստանալու ցանկությունը Հայաստանում մեծ չէ՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգն ուսանողների կողմից դիտվում է որպես դեռևս ամբողջությամբ չկայացած, քանի որ բովանդակային առումով մագիստրոսի կրթական ծրագրերի դասընթացները հաճախ կրկնում են բակալավրինը:

ՀՀ բուհերում սովորողների թվաքանակի փոփոխության շարժընթացը 2012-2013-ից 2017-2018 ուսումնական տարիների ընթացքում

Կարևոր է նաև պարզել ՀՀ բուհերի սովորողների թվաքանակի փոփոխության 5 տարվա շարժընթացը: Այդ նպատակով ուսումնասիրվել են նաև 2012-2013 ուսումնական տարվա տվյալները[37], որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ բուհերում սովորողների ընդհանուր թիվը 2012-2013 ուստարում, բարձրագույն կրթության 3 աստիճաններում կազմել է 103 405[38]:

Ընդ որում, նշված ժամանակահատվածում սովորողների թիվը, ըստ բարձրագույն կրթության 3 աստիճանների, բաշխվել է հետևյալ կերպ.

- 1-ին աստիճանում ուսանողների թիվը կազմել է 90 145 (սովորողների ընդհանուր թվի 87.1%-ը),
- 2-րդ աստիճանում ուսանողների թիվը կազմել է 12 105 (սովորողների ընդհանուր թվի 11.7%-ը),
- 3-րդ աստիճանում սովորողների թիվը կազմել է համապատասխանաբար՝ ասպիրանտուրայում՝ 1104 և դոկտորանտուրայում՝ 51 (սովորողների ընդհանուր թվի 1.2%-ը):

Վերը բերված տվյալներից երևում է, որ 5 տարվա ընթացքում սովորողների ընդհանուր թիվը ՀՀ բուհերում նվազել է 11 735 սովորողով կամ 11.34%-ով:

Հատկանշական է, որ սովորողների թիվը նվազել է բարձրագույն կրթության բոլոր 3 աստիճաններում, սակայն տարբեր չափով. բակալավրիատում ուսանողների թիվը նվազել է 12.6%-ով, մագիստրատուրայում՝ 2.6%-ով, իսկ ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում՝ 2.2%-ով: Այսպիսով, ուսանողների թվաքանակը ամենամեծ չափով նվազել է բակալավրիատում:

Հետաքրքիր է պարզել նաև նշված 5 տարիների ընթացքում անվճար և վճարովի համակարգերում ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնության փոփոխությունը:

---

[37] Տե՛ս **Կ. Հարությունյան,** ՀՀ բուհերի սովորողների ֆինանսական և սոցիալական աջակցության հիմնախնդիրների վերլուծություն և առաջարկություններ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, «Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները Հայաստանում, 27-28 մարտ, 2014 թ.» միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 2 (հատուկ թողարկում), 5-րդ հ., 2014, Եր., էջ 24-32:

[38] ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ. և դինամիկ շարքեր (2007-2012), վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2013, էջ 178-240, https://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf:

Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ 2012-2013 ուսումնական տարում սովորողների ընդհանուր թվի 84.3%-ը ուսումնառել է վճարովի հիմունքներով, 15.7%-ը՝ անվճար հիմունքներով, իսկ 2017-2018 ուսումնական տարում՝ համապատասխանաբար 84%-ը և 16%-ը:

Մասնավորապես, ըստ բարձրագույն կրթության առանձին աստիճանների վճարովի և անվճար հիմունքներով սովորողների տոկոսային համամասնության փոփոխության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բակալավրիատում անվճար հիմունքներով սովորողների տոկոսը, ըստ էության, չի փոփոխվել. մագիստրատուրայում որոշ չափով աճել է, իսկ հետբուհական կրթությունում՝ մի փոքր նվազել: Տվյալները բերված են ստորև:

- 2012-2013 ուստարում անվճար հիմունքներով սովորել է բակալավրիատի ուսանողների 13.1%-ը, իսկ վճարովի հիմունքներով՝ 86.9%-ը: 2017-2018 ուստարում անվճար հիմունքներով սովորել է բակալավրիատի ուսանողների 13%-ը, իսկ վճարովի հիմունքներով՝ 87%-ը: ***Անվճար հիմունքներով սովորողների թվի նվազումը բակալավրիատում կազմել է ընդամենը 0.1%:***
- 2012-2013 ուստարում անվճար հիմունքներով սովորել է մագիստրատուրայի ուսանողների 27.2%-ը, իսկ վճարովի հիմունքներով՝ 72.8%-ը: 2017-2018 ուստարում անվճար հիմունքներով սովորել է մագիստրատուրայի ուսանողների 31%-ը, իսկ վճարովի հիմունքներով՝ 69%-ը: ***Անվճար հիմունքներով սովորողների թվի աճը մագիստրատուրայում կազմել է 3.8%:***
- 2012-2013 ուստարում անվճար հիմունքներով սովորել է հետբուհական կրթություն ստացողների 97.8%-ը, իսկ վճարովի հիմունքներով՝ 2.2%-ը: 2017-2018 ուստարում անվճար հիմունքներով սովորել է հետբուհական կրթություն ստացողների 96%-ը, իսկ վճարովի հիմունքներով՝ 4%-ը: ***Անվճար հիմունքներով սովորողների թվի նվազումը ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում կազմել է 1.8%:***

Եզրահանգումներ

- 2012-2013-ից 2017-2018 ուստարիների ընթացքում վճարովի հիմունքներով սովորողների թիվը (բացարձակ թվով) նվազել է 2 անգամ ավելի, քան անվճար հիմունքներով սովորողներինը:
- Անվճար և վճարովի համակարգերում ՀՀ բուհերի սովորողների տոկոսային համամասնության և սովորողների ընդհանուր թվաքանակի փոփոխությունները խիստ անհամարժեք են:
- Այն պայմաններում, որ բուհերում սովորողների ընդհանուր թիվը 5 ուստարում նվազել է 11.34%-ով, ընդ որում՝ նվազելով կրթության բոլոր աստիճաններում, անվճար հիմունքներով սովորողների տոկոսն աննշան աճել է՝ 0.3%-ով:
- Նշված 5 ուսումնական տարիների ընթացքում ՀՀ բուհերում սովորողների թվի նվազումը չի անդրադարձել վճարովի և անվճար հիմունքներով սովորողների տոկոսային համամասնության վրա. այն ըստ էության մնացել է անփոփոխ:

Շարունակելի

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018, վիճակագրական–վերլուծական զեկույց, ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf, https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf:
2. ՀՀ սոցիալական վիճակը 2017 թ. և դինամիկ շարքեր (2013 - 2017), վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե (Արմստատ), Եր., 2018, https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_ 6.pdf:
3. ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ. և դինամիկ շարքեր (2007-2012), վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2013, https://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf:
4. Հարությունյան Կ., ՀՀ բուհերի սովորողների ֆինանսական և սոցիալական աջակցության հիմնախնդիրների վերլուծություն և առաջարկություններ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները Հայաստանում, 27-28 մարտ, 2014, միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, մաս 2 (հատուկ թողարկում), 5-րդ հ., Եր., 2014:
5. Ballas D., Lupton R., Kavroudakis D., Hennig B., Yiagopoulou V., Dale R., Dorling D. Mind the Gap: Education Inequality Across EU Regions. An Independent Report Authored for the European Commission by the NESSE Network of Experts; www.nesse.fr., 2012.
6. BFUG Working Group on the Social Dimension and Lifelong Learning 2012-2015, Report, http://www.ehea.info/pid34436/social-dimension. html.
7. "Equality in a Knowledge-based Society - How to Widen Opportunities?" (Best Practices in National Action Plans), General Report of the Official Bologna Process Seminar, 10-11 November 2008, Budapest, Hungary, preprared by Katalin Tausz and Katalin Gyöngyösi. http://www.aic.lv/ace /ace_disk/2007_09/sem07_09/Budap_socdim/General_report.pdf.
8. ESIB (2001a), Student Göteborg Declaration (25 March 2001). The Student Göteborg Convention, 22nd to the 25th of March 2001. http://www.aic.lv/ace/ace_disk/Bologna/maindoc/STUD_GOETEB.pdf.
9. Eurostat, Eurostudent. The Bologna Process in Higher Education in Europe: Key Indicators on the Social Dimension and Mobility. Eurostat – Eurostudent.eu, 2009. https://www.eurostudent.eu/download_files /documents/KS-78-09-653-EN.pdf.
10. European Commission /EACEA/ Eurydice. Focus on Higher Education in Europe 2010: The Impact of the Bologna Process. Brussels: Eurydice, 2010, http://www.aic.lv/bolona/2010/minsterial/FOCUS_HE_2010_ EN.pdf.
11. European Commission /EACEA/ Eurydice (2011). Modernisation of Higher Education in Europe 2011: Funding and the Social Dimension. Brussels: Eurydice, http://www.finhed.org/media/files/12-131EN.pdf.
12. European Commission /EACEA/. Eurydice. Modernisation of Higher Education in Europe: Access, Retention and Employability 2014.

Eurydice Report. Luxembourg: Publications Office of the European Union, 2014.
https://eurydice.org.pl/wp-content/uploads/2015/01 /165EN.pdf.
13. European Commission /EACEA/ Eurydice. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, 2018, https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites /eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf.
14. Gwosć C., Vögtle E.M., Hauschildt K. (2008). Social and Economic Conditions of Student Life in Europe: Eurostudent VI, 2016–2018 | Synopsis of Indicators. German Centre for Higher Education, https://www.eurostudent.eu/download_files/documents/EUROSTUDENT_VI_Synopsis_of_Indicators.pdf.
15. Hackl E., The Intrusion and Expansion of Community Policies in Higher Education. Higher Education Management, 13 (3), 2001. http://scholar.harvard.edu/files/manja_klemencic/files/2012_klemencic_how_esib_got_into_bologna_process.pdf?m=1444558454.
16. Klemenčič M., How ESIB- the National Union of Students Got into the Bologna Process. In Ivosević, V., Päll, A. and M. Vukasović (2012). ESU Turns 30! Fighting for Student Rights Since 1982. Brussels: European Students' Union, 2012. http://scholar.harvard.edu/files/manja_klemencic /files/2012_klemencic_how_esib_got_into_bologna_process.pdf?m=1444 558454.
17. Kooij Y., European Higher Education Policy and the Social Dimension: A Comparative Study of the Bologna Process. Palgrave Macmillan, 2015.
18. Marginson S., The Worldwide Trend to High Participation Higher Education: Dynamics of Social Stratification in Inclusive Systems. Higher Education, 72, 2016.
19. OECD, How much do tertiary students pay and what public support do they receive?", Education Indicators in Focus, No. 41, OECD Publishing, Paris, 2016. https://doi.org/10.1787/5jlz9zk830hf-en.
20. Poverty and Shared Prosperity 2018: Piecing Together the Poverty Puzzle. International Bank for Reconstruction and Development/The World Bank, 2018. https://openknowledge.worldbank.org/bitstream /handle/10986/30418/9781464813306.pdf.
21. Roble, J. Poverty Fact Sheet: Financial Barriers to College Completion. Institute for Research on Poverty, University of Wisconsin–Madison, 2017, https://www.irp.wisc.edu/publications/factsheets/pdfs/FactSheet12-CollegeBarriers.pdf.
22. Salmi J., Social Dimension Within a Quality Oriented Higher Education System. // Curaj A., Deca L., Pricopie R. (eds) European Higher Education Area: The Impact of Past and Future Policies. Springer, Cham, 2018.
23. Towards the European Higher Education Area. Communiqué of the Meeting of European Ministers in Charge of Higher Education in Prague on May 19th 2001, http://www.ehea.info/media.ehea.info/file/2001_Prague/44/2/2001_Prague_Communique_English_553442.pdf.
24. Towards the European Higher Education Area: Responding to Challenges in a Globalised World. London Communiqué, 18 May 2007. http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/2007_London_Communique_English_588697.pdf.

25. Zgaga P., The Social Dimension in the European Higher Education Area. // Baranović B., (ed.) (2015). Koji Srednješkolci Namjeravaju Studirati? Pristup Visokom Obrazovanju i Odabir Studija [Which High School Students Plan to Study? Access to Higher Education and the Selection of Studies]. (Biblioteka Znanost i društvo, 37). Zagreb.
26. https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf
27. https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf
28. https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_6.pdf
29. https://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf
30. http://www.ehea.info/pid34436/social-dimension.html
31. http://www.aic.lv/ace/ace_disk/2007_09/sem07_09/Budap_socdim/General_report.pdf
32. http://www.aic.lv/ace/ace_disk/Bologna/maindoc/STUD_GOETEB.pdf
33. http://www.ehea.info/media.ehea.info/file/2001_Prague/44/2/2001_Prague_Communique_English_553442.pdf
34. https://www.eurostudent.eu/download_files/documents/KS-78-09-653-EN.pdf
35. http://www.aic.lv/bolona/2010/minsterial/FOCUS_HE_2010_EN.pdf
36. http://www.finhed.org/media/files/12-131EN.pdf
37. https://eurydice.org.pl/wp-content/uploads/2015/01/165EN.pdf
38. https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf
39. https://www.eurostudent.eu/download_files/documents/EUROSTUDENT_VI_Synopsis_of_Indicators.pdf
40. http://scholar.harvard.edu/files/manja_klemencic/files/2012_klemencic_how_esib_got_into_bologna_process.pdf?m=1444558454
41. https://doi.org/10.1787/5jlz9zk830hf-en
42. http://scholar.harvard.edu/files/manja_klemencic/files/2012_klemencic_how_esib_got_into_bologna_process.pdf?m=1444558454
43. https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/30418/9781464813306.pdf
44. https://www.irp.wisc.edu/publications/factsheets/pdfs/FactSheet12-CollegeBarriers.pdf
45. http://www.ehea.info/media.ehea.info/file/2001_Prague/44/2/2001_Prague_Communique_English_553442.pdf
46. http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/2007_London_Communique_English_588697.pdf
47. https://www.armstat.am/am/?nid=532
48. https://armlur.am/35067/

КАРИНЕ АРУТЮНЯН
Ректор ЕГУЯСН им. В.Брюсова,
кандидат физико-математических наук

Социальная направленность системы высшего образования в Республике Армения.– В настоящей статье, с точки зрения социальной справедливости и равенства, анализируется одна из декларированных целей Болонского процесса - социальная направленность высшего образования, ее сущность и значение.

В статье подробно рассмотрены проблемы социального характера в системе высшего образования Армении. Были изучены качественно-количественные аспекты связи проблемы бедности с ограничениями доступа к высшему образованию, а также рассмотрены реальные возможности получения высшего образования для разных социальных групп населения.

Автором был произведен сравнительный анализ государственной политики финансирования высшего образования Армении с политикой других стран и регионов мира, на основе международных показателей: охвата высшим образованием, платного и бесплатного обучения, финансирования и т.д.

Были изучены также финансовые и другие важные факторы, которые негативно влияют на доступ к высшему образованию, создавая неравные условия для уязвимых групп населения и приводя их к весьма ограниченному вовлечению в высшем образовании. Рассмотренные факторы: (а) ограниченная сумма средств, выделяемых на высшее образование из государственного бюджета, (б) плата за обучение, которая выше среднемесячного дохода семей, живущих за чертой бедности; (б) ограниченные возможности для получения государственных пособий, стипендий и других форм поддержки студентов. Произведен сравнительный анализ данных за последние пять лет. В рамках статьи обсуждаются также проблемы, связанные с поддержкой студентов из уязвимых групп населения.

Ключевые слова: *высшее образование, социальная направленность, охват, бедность, плата за обучение, финансирование.*
JEL: I23, I24

KARINE HARUTYUNYAN
Rector of Brusov YSULS,
PhD in Physical and Mathematical Sciences

Social Dimension of the Higher Education System in the Republic of Armenia.– The paper analyzes one of the goals of Bologna Process: the essence and importance of the social dimension of higher education in terms of social justice and equality.

Particularly, the research presents the results of the case study on the social dimension policies in Armenia and suggests measures for improving them. It studies the problem of strong correlation between access to higher education and poverty from the qualitative and quantitative points of view. The real opportunities for participation and completion of higher education for different social groups of the population are analyzed.

A comparative analysis of the government policy in the field of higher education financing in Armenia with the policies in different regions and countries is conducted. The analysis is conducted based on the internationally accepted higher education indicators on enrollment, funding, tuition fees, etc. The study also examines financial and other key factors negatively impacting on the access to and participation in higher education creating inequity towards specific groups of population and resulting in their limited representation. The revealed factors are: (i) the extremely limited state funding allocated to the higher education institutions; (ii) tuition fees, which, on average, are higher than monthly income of families living below the official poverty line; (iii) insufficient number of state scholarships, stipends and limited opportunities and forms of student support in Armenia. The findings are based on the comparative analysis of data for the last five years.

Finally, the study examines the issues concerning support to students from the vulnerable groups of the population.

Key words: *higher education, social dimension, enrollment, poverty, tuition fees, financing.*
JEL: I23, I24